# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
# 20.12.2014 Թ. N << ԲԸՀԱՇՁԲ-14/25>>
# ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան

10 մարտի 2015 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետև՝ Հիմնարկ), ի դեմս Հիմնարկի տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիդեք» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ նաև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային մասնաշենքի փլուզված հատվածամասի վերակառուցման աշխատանքների կատարման 20.12.2014 թ. կողմերի միջև կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/25 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի կատարման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի սեպտեմբերի 30-ը՝ Պայմանագրի 1.3 կետի «*ապրիլի 30-ը*» արտահայտության փոխարեն կարդալով «*սեպտեմբերի 30*» արտահայտությամբ:

1.2 Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկը փոխարինել Համաձայնագրի թիվ 1 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկով:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի բաղկացուցիչ մասն է կազմում օրացուցային գրաֆիկը սահմանող թիվ 1 հավելվածը՝ կազմված 1 էջից:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ |
|---|---|
| ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>>ՊՀ | <<Բիդեք>> ՍՊԸ |
| ք.Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | ք.Երևան, Նեկրասովի 86 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Ամերիաբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900011000347 | Հ/Հ 1570015559920100 |
| ՀՎՀՀ 02553861 | ՀՎՀՀ 00450801 |
| Տնօրեն՝ | Տնօրեն՝ |
| Հ. Սարգսյան ____________ (ստորագրություն) Կ.Տ | Գ.Ավետիսյան ____________ (ստորագրություն) Կ.Տ |

*Հավելված թիվ 2*

*20 դեկտեմբերի 2014թ.*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ԲԼՀԱՇՁԲ-14/25 գնման պայմանագրի*
*2014 թ. մարտի 10-ի թիվ 1 համաձայնագրի*

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային մասնաշենքի փլուզված հատվածամասի վերակառուցման աշխատանքների կատարման

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Ծավալը (ՀՀդրամ) | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|---|
| | | | Սկիզբը | Ավարտը |
| 1. | Շին. վերանորոգման աշխատանքներ | | | |
| 1.1 | Քանդման աշխատանքներ | 2,125,477 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից | 30.06.2015թ. |
| 1.2 | Ամրացման և ուժեղացման աշխատանքներ | 9,484,781 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից | 20.09.2015թ. |
| 1.3 | Ճարտարապետաշինարարական աշխատանքներ | 16,342,775 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից | 30.09.2015թ. |
| 2. | Ներքին ջրամատակարարման ցանց | | | |
| 2.1 | Ապամոնտաժման աշխատանքներ | 111,540 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից | 30.06.2015թ. |
| 2.2 | Մոնտաժման աշխատանքներ | 557,700 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից | 30.09.2015թ. |
| 3. | Ներքին կոյուղու ցանց | | | |
| 3.1 | Ապամոնտաժման աշխատանքներ | 397,980 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից | 30.06.2015թ. |
| 3.4 | Էլեկտրամոնտաժային աշխատանքներ | 219,546 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից | 31.08.2015թ. |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 29,239,799 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից | 30.09.2015թ. |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>>ՊՀ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011000347
ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ**

<<Բիլդեք>> ՍՊԸ
ք.Երևան, Նեկրասովի 86
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570015559920100
ՀՎՀՀ 00450801

Տնօրեն Գ.Ավետիսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ